

ՀԱՅԵՐԵՆԻ, ՌՈՒՍԵՐԵՆԻ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՍՈՍԱՏԻԿ ԲԱՂԱԴՐՈՒՉՆԵՐՈՎ ՀԱՄԱՐԺԵ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐԸ

Լեզուների զուգադրական ուսումնասիրության տեսական և գործնական արժեքը, որին ժամանակին անդրադարձել է Շ. Բալլին, երբևէ վիճահարույց հարց չի եղել: Չնայած այն հանգամանքին, որ լեզուների զուգադրական ուսումնասիրություններին մեծ զարկ տրվեց 20-րդ դարի 60-ական թթ., այդուհանդերձ լեզուների տարբեր մակարդակների հետևողական և համակողմանի զուգադրական ուսումնասիրությունները դեռ զարգացման փուլում են:

Զուգադրվել և համեմատվել կարող են տարբեր լեզուների հնչյունական և, քերականական համակարգերը: Վերջիններիս զուգադրումը բարդ գործընթաց է, քանզի տարբեր լեզուներում գործող քերականական կարգերը խիստ անհամարժեք են: Այսպես, օրինակ, ոչ բոլոր լեզուներում են առկա ձևայինները: Այն լեզուներում, որոնցում դրանք առկա են, խիստ տարբերվում են ըստ իրենց տեսակների, լեզվում ունեցած իրենց դերի: Քերականական այն կարգերը, որ գոյություն ունեն մեկ լեզվում, կարող են լիովին բացակայել մյուսում, օրինակ, բայի ապառնի վաղակատար ժամանակաձևն առկա է մեր կողմից դիտարկվող հայերենում և անգլերենում, մինչդեռ ռուսերենում այդ ժամանակաձևի ցույց տված գործողությունը կարող է արտահայտվել ոչ թե քերականորեն այլ բառային եղանակով: Մեկ այլ դեպքում ինչ-որ մեկին մի բան անել, անել տալու իմաստը, որն անգլերենում արտահայտվում է "have" բայի պատճառական գործածությամբ, հայերենում անել տալ հարադիր բայով, մինչդեռ ռուսերենում այս իմաստը ևս արտահայտվում է բառագիտական միջոցներով:

Շարահյույսյան բնագավառում սովորաբար զուգադրվում են շարահյուսական միավորների տարբեր հատվածներ՝ կառույցներ (անդեն արտահայտություններ, շարահյուսություն և այլն): Հետաքրքրություն են ներկայացնում բառապաշարի զուգադրական ուսումնասիրությունները: Այս ոլորտում ստացվել են օգտակար տեսական արդյունքներ: Զուգադրական վերլուծություններն այս ասպարեզում նպաստում են բառարանագրության, բարգմանչության զարգացմանը: Բացահայտվել են համարժեք և անհամարժեք բառերի կատեգորիաներ, ուղղակի և փոխաբերական թարգմանության տարբեր եղանակներ և այլն:

Հատկապես ուշագրավ են տարբեր լեզուների դարձվածաբանական համակարգերի զուգադրական ուսումնասիրությունները: Դարձվածքների ճնշող

մեծամասնությունը սովորաբար չունի իր համարժեքն այլ լեզուներում: Այդ է պատճառը, որ դրանց թարգմանությունը որոշակի դժվարություններ է հարուցում: Այս դեպքում պահանջվում է գտնել համարժեք դարձվածքը մյուս լեզվից կամ ներկայացնել տվյալ դարձվածքի նկարագրական մեկնաբանությունը:

Ը. Բալլին անդրադարձել է լեզուների ոճական միջոցների զուգադրության հարցին: Իր «Փրանսերենի ոճաբանություն» աշխատանքում նա նշում է, որ այլ լեզուների ոճական միջոցների ուսումնասիրությունները հնարավորություն կընձեռեն ավելի խորը գիտակցել մայրենի լեզվի արտահայտչականության հնարավորությունները, որոնք տվյալ լեզվի կրողների կողմից օգտագործվում են անգիտակցաբար. «կերպարների բնույթի մեջ կարող են հայտնաբերվել մեծ տարբերություններ, վերջապես լեզվական փաստերը, որոնք պատկերացում են տալիս որոշակի հասարակական միջավայրի մասին, տարբեր լեզուների արտահայտչական փաստերի խորհրդանշական և հասարակական գունավորումը հնարավորություն կտային կատարել բազմաթիվ հետաքրքիր եզրահանգումներ¹: Լեզուների զուգադրումը հնարավորություն է տալիս սահմանազատել ղեկնուտատիվ իմաստը, որն արտացոլում է արտալեզվական իրողություններով պայմանավորված երևույթները և կոնոտատիվ իմաստը: Այս իմաստներն առաջանում են լեզվի համակարգում և բացատրվում են լեզվի համակարգային հարաբերություններով: Դեմոտատիվ նշանակությամբ օժտված լեզվական միավորները սովորաբար համարժեք են, քանի որ վերաբերում են միևնույն երևույթին արտալեզվական ոլորտում, մինչդեռ կոնոտատիվ միավորները կարող են համադրվել որևէ բաղադրիչով կամ ընդհանրապես իրենց արտահայտությունը չեն գտնում լեզուներում²:

Ինչպես արդեն նշել ենք, տարբեր լեզուների դարձվածքային միավորների իմաստային առանձնահատկությունների զուգադրական-տիպաբանական ուսումնասիրությունները ժամանակակից լեզվաբանության մեջ համեմատաբար սակավաթիվ են: Այս ոլորտում կարևոր խնդիր է համեմատվող լեզուների ձևույթների տեսակների և առանձին լեզվի յուրահատկության բացահայտումը: Սրանք կարևոր խնդիրներ են, քանզի լեզվի դարձվածքային միավորները մի կողմից լեզվական ընդհանրույթներ են, մյուս կողմից՝ վառ արտահայտված լեզվական եզակի միավորներ, որ արտացոլում են այս կամ այն լեզվի ազգային

¹ Балли Ш. Французская стилистика. М., 1961. - с. 42-43.

² Попова З. Д. Сопоставительно-семантические исследования русского языка. Воронеж, 1980, с.35.

յուրահատկությունը, նրա բառային, քերականական և ոճաբանական առանձնահատկությունները:

Հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուների դարձվածքների իմաստային առանձնահատկությունների դիտարկումը ցույց է տալիս, որ բովանդակային առումով երեք լեզուների նշված միավորները բաժանվում են երկու խմբի՝ իմաստային առումով համարժեք դարձվածքների և իմաստային տարբերվող հատկանիշներով օժտված դարձվածքների: Առաջին խմբում առանձնանում են հնդեվրոպական իմաստային ընդհանրություններին պատկանող դարձվածքները, մինչդեռ երկրորդ խմբում տեղ են գտել պատճենված դարձվածքները, առանձին լեզվի դարձվածքների յուրահատկություններով օժտված միավորները, ինչպես նաև դարձվածաբանական բացթողումները:

Առաջին խմբում ընդգրկված դարձվածքները լրիվ համարժեքներ են, այսինքն ունեն բառային նույնական կազմ, քերականական և ոճական նույնապիսի առանձնահատկություններ դիտարկվող երկու կամ երեք լեզվում միաժամանակ օժտված լինելով նույն իմաստով, նույնիսկ նույն նրբիմաստով, մի հանգամանք, որ նպաստում է նրանց կայունությանը: Բերենք մի քանի նման օրինակ՝ ականջը/ականջին հասնել, ականջը ընկնել – *доходить / дойти до ушей* – *reach sb's ears*, քթին խփել, քթին տալ, քիթը փոթել – *ударить / бить в нос*, կաշին/մորթը փրկել – *сберечь шкуру* – *save one's skin*, անոթի փորով – *на голых ногах*, ոտքերի վրա հազիվ կանգնել – *едва на ногах стоять*, սրտից արյուն է կաթում – *сердце облусаётся кровью* – *one's heart bleeds*, գլուխը կորցնել, – *терять голову* – *lose one's head*, քները խուզել – *clip sb's wings*, մազերը բռնել – *схватывать себя за волосы*, կրկնի տակ (լինել) – *под пяткой* – *(be) under sb's heel / thumb*, սիրտը զրավել, սիրտը նվաճել – *покорять сердце* – *win sb's heart*, ձեռքերը շփել – *rub one's hands*, մեքք ծռել – *гнуть спину*, գլուխ կոտրելով – *сломать голову*, սիրտը բերանը բերել – *bring sb's heart into his mouth*, աչքն ուրախացնել – *радовать глаз*, սիրտը բաց անել/բացել/ – *открывать/открыть сердце* – *open one's heart to sb*, գլուխը պտտեցնել, – *кружить голову*, – *turn one's head*, ձեռքը փորձել – *испытать руку* – *chance one's arm, try one's wings* և այլն:

Ինչպես նկատում ենք, բերված դարձվածքներում համընկնում են թե պատկերները, թե բառային կազմերը: Բացի այդ, հիշյալ դարձվածքներն արտահայտում են միևնույն հասկացությունները մի շարք դեպքերում՝ երեք, այլ դեպքերում՝ երկու լեզվում:

Լրիվ համարժեքների շարքում հանդիպում են նաև այնպիսի միավորներ, որոնք ունեն բառային նույն կազմը, նույն իմաստներն ու նրբիմաստները, ոճական միևնույն առանձնահատկությունները, սակայն տարբեր են քերականական առանձնահատկություններով, այսինքն՝ նրանց բաղադրիչները ունեն ձևաբանական և շարահյուսական տարբեր առանձնահատկություններ, ինչպես, օրինակ՝ մատները լպստել - пальцы облизать, կաշին հաստ - have a thick skin, գլուխը ծանր, գլուխը ծանրանալ - тяжёлая голова, պոռուճակի վրա աչք լինել - глаза на затылке - have eyes on one's neck, սրտից քար ընկնել - камень с сердца свалился, ականջը խարտոցել - ухо рожет, գլուխը հաստ, - a thick-headed thing, մազը մազից ջոկել - split hairs, փոքի գերի դառնալ - be given to one's belly, ձեռքը մաքուր - clean hands, բերնի ջրերը գնալ - one's mouth waters, սիրտը դողալ / դողդողալ - сердце дрогнуло և այլն:

Տարբեր լեզուներում իմաստային առումով համարժեք դարձվածքների առաջացումն ու գործածվելը բացատրվում է այդ լեզուները կրող ժողովուրդների ընդհանուր պատկերացումներով և առնչություններով, մի հանգամանք, որն իր հերթին պայմանավորված է շրջապատող իրողությունների ընդհանրությամբ: Բերված դարձվածքների իմաստների հիմքում հաճախ ընկած են բնության ամենատարբեր երևույթների պատկերները, բուսական և կենդանական աշխարհի օբյեկտները: Ավելի քիչ են գործողության կամ անձի վիճակ արտահայտող դարձվածքները, որոնք աչքի են ընկնում մեծ արտահայտչականությամբ և ընդգծված հուզականությամբ: Դիտարկված դարձվածքների կառուցվածքային և իմաստային համարժեքությունը կարելի է բացատրել նաև դրանց ծագման ընդհանուր աղբյուրով: Սրանք հիմնականում «Աստվածաշնչից» կամ դիցաբանությունից ծագած դարձվածքային միավորներ են, որոնք պատկանում են հնդեվրոպական լեզուների ընդհանուր դարձվածքային ֆոնդին: Դրանք ոճական տարբեր հնարներով ձևավորված գոյականական, բայական, ածականական, հաղորդակցական դարձվածքներ են:

Դարձվածքների շարքում հանդիպում են այնպիսիք, որոնք մասամբ են համարժեք, այսինքն՝ ունեն նույն իմաստը, սակայն տարբերվում են մեկ-երկու բաղադրիչով, քերականական և ոճական առանձնահատկություններով: Սրանք կոչվում են մասնակի համարժեքներ, օրինակ՝ աչքի լույսի պես պահպանել - беречь как зиницу ока - as the apple of one's eye, Աքիլլեսյան գարշապար - Ахиллесова пята - Achilles heel, ձեռքերը լվանալ - мыть руки - wash one's hands, ձեռքը բերանը հասնել - live from hand to mouth, պարապ գլխում չար մտքեր են ծնվում - на безделье всякая дурь в голову лезет - an idle brain is the devil's workshop, մաքուր ձեռքը լվալ պետք չէ - чистую руку мыть не

нужно – a clean hand wants no washing, կրծքի վրա օձ տաքացնել – nurpemy zmaye na grydu – cherish a serpent on one's bosom, քրով հոտ ընկնել, քիթը հոտ առնել – бросаться / броситься в нос, գլուխը դժժալ – шумит в голове, գլուխն ընկնել, գլուխը տաքանալ, գլխին խփել / զարկել, գլուխը տաք – ударять в голову, бросаться в голову – go to one's head, աչքերին քունը մոտ չգալ, աչք չկապցնել – не смыкать глаз, – not to bat an eye և այլն:

Նշված դարձվածքների իմաստային կառուցվածքը զուգադրվող բոլոր լեզուներում բնորոշվում է դեմոտատիվ և կոնոտատիվ իմաստների նույնատիպ հարաբերակցությամբ: Այլ կերպ ասած, վերոնշյալ դարձվածքների իմաստները նույն չափով առնչվում են օբյեկտիվ իրականության առարկաների պատկերներին, որոնք ներկայանում են տրված դարձությանին ֆազանների ցուցչային կառուցվածքում առաջնային բառայիններով՝ «աչք», «լույս», «зеница», «око», «eye», «apple»: Բացի այդ, դարձվածքում բառայինների համադրումը ձևավորում է նոր իմաստ արտահայտող ձև³: Դարձվածքը կազմող բաղադրիչների իմաստային փախազդեցության հետևանքով առաջանում է իմաստի կոնոտատիվ բաղադրիչը: Այսպես, համարժեք դեմոտատիվ իմաստների դեպքում զուգադրվող դարձվածքներին բնորոշ է նաև կոնոտատիվ իմաստի նույնությունը, օրինակ՝ բերնի ջրերը գնալ – one's mouth waters, ականջը/ականջին հասնել, ականջն ընկնել – доходить / дойти до ушей, ծնկները ծալվել – ноги подкосились, գլուխն այրվել, – голова горит, ձեռ ու ոտը թուլանալ – как без рук, աչքերը չել – таращить глаза, աչքը կանգ առնել – останавливать свои глаза (на ком-то, чем то), աչքը չկտրել / չհեռացնել – не сводить глаз, սիրտը հանգստանալ – отдыхать сердцем / душой, երեսից գույնը թռչել – лица нет, մազերը / գլուխը բռնել – схватить себя за волосы, ծոծրակը քորել – чесать в затылке, մատները լիզել – пальчики облизывать, թևերը / ձեռները ծալել-մատել – сложить сложа руки – fold one's hands, մատն իսկ չշարժել – пальцем не шевельнуть – not to do a hand's turn, կաշվի վրա զգալ – (испытать) на своём шкуре և այլն:

Դիտարկվող լեզուների դարձվածքների իմաստային և ծագումնաբանական ազգակցությունը կարելի է բացատրել դրանց դարձվածքային իմաստի ձևավորման համար հիմք ծառայող պատկերների մեմոությամբ, ինչպես նաև նրանց ձևի (ռիթմ, կառուցվածք և այլն) որոշ գեղարվեստական առանձնահատկությունների ընդհանրությամբ:

³ Алефиренко Н. Ф. Некоторые аспекты сопоставительно-семантического анализа фразеологизмов русского и украинского языков, 1977, с. 28.

Երեք լեզուներում հանդիպում են այնպիսի համարժեք դարձվածքներ, որոնք թեև բառային կազմով և կառուցվածքով համարժեք չեն, սակայն արտահայտում են միևնույն իմաստը՝ նույն փոխաբերական պատկերն են ստեղծում, օրինակ՝ թույլ երակը գտնել – find the length of sb's foot, երես տվինք՝ աստառ ուզեց, ոտաց տեղ էրեց, զուխն էլ զուգե -let him put in his finger and he will put in his whole hand, քիկունք չունենալ – not to have a leg to stand on, ծախ / քարս ոտքի վրա վեր կենալ – get up on the wrong side, պորտիցդ վեր մի թռչիր, զլխիցդ վեր գործ մի բռնիր – no одевке prominence дохку – stretch your arm no further than your sleeve will reach, լեղին ճաքել, փորումը սիրտ չմնալ, ջանը դող ընկնել – cepaue nadaem, ynao - have butterflies in one's stomach, one's heart leaped into one's throat/mouth, with one's tail between one's legs և այլն:

Վերջին խմբի դարձվածքներն առավել լավ են արտացոլում տվյալ ժողովրդի հոգեբանությունը: Իսկ հոգեբանության տարբերությունները հետաքրքիր ու նշանակալի են, քանի որ դրանք բացահայտում են տվյալ ժողովրդի լեզվամտածողության յուրահատկությունները:

Հարկ է նշել, որ դիտարկվող լեզուները, հատկապես հայերենն ու անգլերենը բավականին տարբերվում են իրենց տիպաբանական կառուցվածքով՝ լինելով համապատասխանաբար համադրական և վերլուծական լեզուներ, սակայն վերջիններիս ցեղակցությունը դիտարկում ենք դրանց՝ հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանելու առումով: Մեկ այլ հանգամանք ևս մոտեցնում է այս լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողությունը: Կարծում ենք, որ պատմական տարբեր հանգամանքների բերումով Ռուսաստանում և անգլախոս երկրներում բնակվող հայերը կրել են այդ տարածքներում, նույն միջավայրում բնակվող ժողովուրդների լեզվամտածողության ազդեցությունը և իրենք ազդել դրա վրա: Չնայած այս հանգամանքին՝ պարտադիր չէ, որ հիշյալ դարձվածքները լինեն միայն պատճենման արդյունք:

Դարձվածքների մեկ այլ խումբ ընդգրկում է այն միավորները, որ թեև համարժեք, սակայն նշված լեզուներում օժտված են լրացուցիչ իմաստներով: Նման դարձվածքների շարքին են պատկանում դարձվածքային պատճենումները, որոնք տարբեր լեզուներ են մուտք գործում տարբեր աղբյուրներից (բարբառներից, գրականությունից և այլն) և ապա պատճենվում են ցեղակից լեզվում: Այս դեպքում հաճախ նկատվում է այն երևույթը, որ պատճենված դարձվածքների իմաստը կարող է ընդունող լեզվում ձեռք բերել լրացուցիչ իմաստներ (թե դեմոտատիվ, թե կոնոտատիվ) հուզականության, արտահայտչականության տեսակետից: Սա, կարծում ենք, արդյունք է տվյալ (ընդունող)

ժողովրդի լեզվամտածողության առանձնահատկությունների՝ անզեն աչքով -
 невооруженным глазом - (with) the naked eye, աչքի առաջ լինել (I նշան.) -
 вставать перед глазу - be before / under sb's eyes, լավ լեզու ունենալ -
 язык хорошо подвешен - have a glib tongue, կողերը հաշվել - одну ребра
 осталось - skin and bone, կրունկները ցույց տալ - показывать пятку - show
 one's heels, երկու ձեռքով (միանալ, ստորագրել) - подпisyваться обеими
 рукам - with both hands (II նշան.), իր վրա ձեռք բարձրացնել - накладывать
 на себя руку - lay violent hands on oneself, մի մատը / ճկույթը չարժենալ -
 мизинца не стоить - not to be worth sb's little finger, պողոտաները լստել -
 облизывать губы - lick / smack one's lips, սիրտ սրտի - heart to heart, մինչև
 արյան վերջին կաթիլը - до последнею капли крови - to the last drop of blood,
 ականջին հասնել - доходить до ушей - come to one's ears, այլ աչքերով
 նայել / տեսնել - смотреть другим глазу - look with another eye upon sth,
 քիթը ցցել / տնկել - задирать нос - turn up one's nose at sb / sth, գլուխը
 կտոր-կտոր անել / գլուխը պոկել - сорвать / оторвать голову - take off sb's /
 the head, գլուխն ընկնել (I նշան.) - бросаться в голову - go to sb's head,
 քրտինքը երեսին - в поте лица - by / in the sweat of one's face, պողպատե
 նյարդեր - стальные нервы - iron nerves, ոտքերի վրա հազիվ կանգնել - едва
 на ногах стоять, որքան աչքը կտրի - куда хватаем глаз - as far as one's
 eye could reach, գլուխը տրաքվել - голова лопается и այլն:

Դիտարկող լեզուներում մեծ հետաքրքրություն են ներկայացնում հատ-
 կապես այն միավորները, որոնք իրենց իմաստակառուցվածքային առանձնա-
 հատկություններով պատկանում են մեկ առանձին լեզվի, տվյալ ժողովրդի
 ինքնատիպ ստեղծագործության արդյունք են: Այս խմբի դարձվածքները հա-
 ճախ միևնույն իմաստ արտահայտում են բառային տարբեր կազմերով՝ լեզվի
 վրա (լինել) - be on the lips, կոկորդը չորանալ - have a cobweb in one's throat,
 ոտները լիզել - lick sb's hands, ականջին օղ անել - make a notch on one's nose,
 քունը աչքերին ծանրանալ - глаза слезаются - one's eyes draw straws,
 անոթի փորով - на голодный желудок, սիրտը թալտալ - сердце замораем,
 սիրտը տխրել - кошке скребуть на сердце - be sick at heart, սիրտը տակն ու
 վրա անել - браться за сердце, կրնկի տակ լինել - be under sb's thumb, աչքի
 լույս - be the apple of one's eye, բերանից կաթի հոտ փչել - молоко на губах
 не обсохло, ձեռքը փորձել - chance one's arm, try one's wings, քահելի աչքի
 վրա փարդա կա - a green / fresh hand at sth, մատները հետը կուլ տալ - язык
 проглотить, пальчики облизывать, ոսկի ձեռքեր - золотые руки - head cook

and bottle washer, աչքի սևն ու սպիտակը դեղնել – в глазах зеленеет, աչքերը փչացնել – pore one's eyes out, пробожамь no mealy – make sb's skin crawl և այլն: Այս դարձվածքների իմաստային հարաբերակցությունը հայերենում, ռուսերենում և անգլերենում պայմանավորված է բաղադրիչ-բառույթների նույնական կամ նման իմաստային առանձնահատկություններով, որոնք ներկայացնում են որպես իմաստի համարժեք բաղադրիչներ համապատասխան դարձվածքների իմաստային կառուցվածքում: Համադրվող լեզուներում իմաստի կոնոտատիվ բաղադրիչները ձևավորվում են դարձվածքների բառ-բաղադրիչների փոխաբերացման ընթացքում: Ինչ վերաբերում է դեմոտատիվ բաղադրիչներին, ապա դրանք մարում են և ծառայում որպես հիմք իմաստի պոտենցիալ բաղադրիչի համար:

Երեք լեզուներում առկա են նաև այնպիսի դարձվածքներ, որոնց իմաստային կառուցվածքը չի հարաբերակցվում մյուս լեզուների որոշակի միավորների հետ՝ սրանով հանդերձ ձևավորելով դարձվածքային լակունաներ (բացթողումներ): Այս դեպքում տվյալ դարձվածքի իմաստը մյուս լեզվում տրվում է բացատրական-նկարագրական եղանակով, որոնք, սակայն, դարձվածքային բնույթ չունեն. օրինակ՝ ծեռքից քաշ / քարշ - գող, խարդախ, հազար ծեռք ունենալ - կարող լինել շատ բան անելու, լեզվից խաբվել - շողոքորթ, քծնող, քաղցր խոսքից խաբվել, սիրտը հովացնել - որևէ բանի (վերժի, սիրտ և այլն) ծարավը հագեցնել, վիզը հով պահել - իրեն խնայել, աշխատանքից խուսափել, անգործ ման գալ, գլուխը թաս կոխել - ստիպել, հարկադրել, գլխին մասլ կարդալ - անմիտ բաների մասին երկար- բարակ խոսել, արյունը քսել մեկի դռանը - սպանության հանցանքը մեկի վրա բարդել, մեկին զրպարտել, էլած աչքը տեղը չի գա - մեծ կորուստը չի հատուցվի, ad кромешныи на сержае - ինչ-որ մեկը տանջվում է, с головои - ամբողջովին, продавать глаза - համր, լուռ ու մունջ կանգնել, yxo девка / парень - խարդախ, ճարպիկ աղջիկ / տղա, хомь yшa замькаи - զգվում է ինչ-որ բան լսելիս, с гулькин нос - շատ քիչ, высокое луцо - բարձրաստիճան անձ, be dead on one's feet - շատ հոգնած լինել, a poor hand at sth - անփորձ մարդ, a tongue as long as a stock whip - երկար լեզու, to the nail - շատ մանրամասն, the fountain head - սկզբնաղբյուրը, հիմնական պատճառը, touched in the head - հիմարավուն, անխելք և այլն: Այսպիսով, դիտարկվող լեզուների դարձվածքների իմաստային առանձնահատկությունը պայմանավորված է արտալեզվական գործոնների սերտ փոխազդեցությամբ՝ տվյալ ժողովրդի լեզվամտածողությամբ և այս կամ այն լեզվի համակարգային-իմաստաբանական առնչություններով:

Համարժեքության երևույթը նկատվում է նաև բազմիմաստ դարձվածքների, ինչպես նաև դարձվածքային տարբերակների հոմանիշ, հականիշ ու համանուն դարձվածքների ուղորտներում: Դիտարկվող բոլոր լեզուներում հանդիպում են բառային (աչքի պոչով / ծայրով / եզրով, աչքը / աչքերը սառել / պաղել, սրտի նուրբ / փափուկ տեղին դիպչել / կպչել, վիզ ծռել / թեքել / ճկել, куда хватаем / достаем глаз, класть/положить зубы на полку, ради / для / за прекрасные глаза, clap /lay/ set eyes on/upon sb, pull at/tear sb's heart strings, one's heart sank into one's boots/shoes), քերականական (սիրտը քարանալ / քարացնել, թևաթափ անել / լինել, աչքով / աչքերով ուտել, задевать / задеть за сердце, крутить / закрутить голову, отводить / отвести глаза, before / under sb's eye), բառաքերականական (սրտից ծանրություն(ը) ընկնել / զգնել, սիրտը շուռ անել / բերել / զալ / տալ, cast /pass/ run one's / the eye over sth), ոճական (սրտից արյուն զնալ/երթալ/կաթել, սրտին յուղ/եղ կանգնել, սրտի ապակին /շուշան կոտրել, буйная голова / головушка), քանակական (զլխին (սև) ծյուն բերել, свернуть (себе) голову, lie (heavy) at sb's heart, have (got) an eye in one's head) տարբերակներ: Նկատելի է, որ միևնույն իմաստ ունեցող դարձվածքային տարբերակներ առկա են դիտարկվող երկու կամ երեք լեզվում: Իհարկե, այստեղ տարբերակների բնույթը կարող է տարբեր լինել, այսինքն՝ կարող են տարբերակներ ունենալ համարժեք դարձվածքների տարբեր բաղադրիչները, քերականական կամ ոճական ձևերը, ինչպես, օրինակ՝ գլուխը լվալ / լվանալ – мыть/мыть голову, ատամները կճտել/կրճտացնել – grind/grate one's teeth, ուր / որքան աչքը կտրի – куда хватаем / достаем / кинем глаз, ծեռքը մաքուր / հալալ / խտակ – clean / white hands, ծախ / թարս ոտքի վրա վեր կենալ – get / set / start off on the wrong foot, սիրտը բանալ/բացել/բաց անել – открывать / открывать сердце, становиться / стать на ногу – be / get on one's feet և այլն:

Հայերենի, ռուսերենի և անգլերենի սոմատիկ բաղադրիչներով բազմիմաստ դարձվածքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում բազմիմաստության ծավալն ու բովանդակությունը նույնը չեն: Բազմիմաստ դարձվածքներով ամենահարուստը հայերենն է: Հայերենում հանդիպում ենք չորսից ավելի իմաստ ունեցող դարձվածքներ: Նկատում ենք նաև, որ որոշ բազմիմաստ դարձվածքների տարբեր իմաստներն իրար հակադիր իմաստ կամ նրբիմաստ են արտահայտում, օրինակ՝ ականջը ծակ – 1. շուտ լսող, օտար լեզվով խոսակցությունը հասկացող: 2. խոսք չհասկացող, չլսող, չենթարկվող, глаза на замке – 1. ամեն ինչ տեսնում է: 2. ոչինչ չի տեսնում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս նաև, որ, թեև խիստ հազվադեպ, մի լեզվի որոշ բազմիմաստ դարձվածքներ ունեն իրենց համարժեքները դիտարկվող այս կամ այն լեզվում: Այդ համարժեքները կարող են լինել լրիվ և մասնակի: Լրիվ համարժեքները, որոնք խիստ սահմանափակ են, համընկնում են իրենց բոլոր իմաստներով: Մասնակի են այն համարժեքները, որ համընկնում են ոչ բոլոր իմաստներով, օրինակ՝ արյուն թափել (1. իրեն զոհաբերել, 2. սպանել մեկին)- *луть кровь* (1. զոհաբերել (մի բան), 2. սպանել մեկին): Անգլերենում երկու իմաստներն արտահայտվում են երկու մենիմաստ դարձվածքներով՝ *shed one's blood* /զոհաբերել իրեն/ և *shed sb's blood* /սպանել մեկին/: Ձեռք բարձրացնել (1. խփել, ծեծել, 2. սպանել, վնասել:) - *поднимать руку* (1. խփել մեկին, 2. սպանել): Ձեռք մեկնել (1. օգնել մեկին, 2. օգնություն խնդրել) - *протянуть руку* (1. օգնել մեկին, 2. օգնություն խնդրել): Անգլերենի *lift one's hand to sb* և *give a hand to sb* դարձվածքները մենիմաստ են և ունեն համապատասխանաբար ծեծել, խփել և օգնել իմաստները: Գլուխը կախել (1. ամաչել, 2. խեղճանալ, ընկճվել) - *hang down one's head* (ամաչել), *hang one's head* (խեղճանալ, հուսահատվել): Հայերենի երկու իմաստներին համապատասխանում են անգլերենի երկու մենիմաստ դարձվածքներ, իսկ ռուսերենի *опустить голову* դարձվածքը մենիմաստ է՝ գլուխը կախել /ամոթից, հուսահատությունից/ իմաստով: *Насочить уши* (1. շատ ուշադիր լսել, 2. լսողությունը լարել), *cock /prick one's ears* (1. շատ ուշադիր լսել, 2. լսողությունը լարել): Հայերենի՝ ականջը սրել դարձվածքը մենիմաստ է՝ լսողությունը լարել իմաստով: Բերանը բաց անել (1. սկսել խոսել, 2. ցանկանալ հակաճառել, 3. խոսել, պարսպվել, 4. ուտել, ծոմը բանալ, 5. զարմանալ, ապուշ կտրել) - *разевать рот* (1. սկսել խոսել, 2. հակաճառել, 3. խիստ զարմանալ, 4. խիստ անուշադիր լինել, 5. դադարել ինչ-որ բան խոսելուց): Անգլերենի *Open one's mouth* դարձվածքը մենիմաստ է՝ զարմանալ իմաստով: Սիրտը գրավել (1. սիրահարեցնել իրեն, 2. սիրաշահել)- *завладеть сердцем* (1. համակել, 2. սերը նվաճել): Անգլերենի դարձվածքը մենիմաստ է՝ սիրտը շահել, նվաճել իմաստով: Ատամները կրճտացնել (1. տամներն իրար զարկել ցրտից, 2. ատամները զայրույթից իրար սեղմել, 3. վրեժի ծարավ լինել) - *скусывать зубы* (1. ատամներն իրար զարկել ցրտից, 2. ատամները զայրույթից իրար սեղմել, 3. վրեժի ծարավ լինել): Անգլերենի *grate one's teeth* դարձվածքը մենիմաստ է՝ ատամներն իրար զարկել՝ ցրտից, զայրույթից իմաստով:

Դիտարկվող լեզուներում առկա հոմանիշ դարձվածքները կարող են միավորվել հոմանշային բույների, խմբերի և շարքերի մեջ⁴։ Առաջինները պարունակում են այնպիսի դարձվածքներ, որ ունեն ընդհանուր բաղադրիչ՝ սիրտը փափուկ – սիրտը բարակ (նրբագագ), *свернуть голову – свернуть шею* (սպանել), *have a good head on one's shoulders – have one's head screwed on right* (խելացի լինել), երկրորդները՝ դարձվածքներ, որ իրենց կազմում չունեն ոչ հոմանիշ, ոչ ընդհանուր բաղադրիչներ՝ երեսը պատռած – մազը կտրած (անամոթ), *белая горячка – зеленые змусы* (արբեցատենդ), *down at the heels – be out at elbows* (վատ, աղքատիկ հագնված), երրորդները, որ պարունակում են թե հոմանիշ և թե ոչ հոմանիշ բաղադրիչներ՝ շան լափը գլխին ածել – գլխին վազքաջուր լցնել (խիստ կշտամբել), *дурья башка – дубовая голова* (հիմար մարդ), *the apple of one's eye – the desire / light of sb's eyes* (մեկի աչքի լույսը)։

Ավելի շատ են համանիշ դարձվածքները։ Դրանցով հայերենն առանձնապես հարուստ է։ Ընդհանրապես քիչ են համանիշ չունեցող միավորները։ Համանիշ են այն դարձվածքները, որոնք արտահայտում են ոչ թե ամբողջությամբ նույն, այլ մոտ իմաստ։ Սովորաբար դարձվածքային համանիշների շարքերն ունենում են երեք և ավելի բաղադրիչներ։ Ամենից շատ համանիշների շարքեր են կազմվում այն դարձվածքներից, որ բնութագրում են մարդու բնավորության գծերը՝ ինչպիսիք են՝ աշխատասիրությունը, վախկոտությունը, ժխտությունը, ագահությունը, անզթությունը, անպարկեշտությունը, խելամտությունը, քաջությունը, խորամանկությունը, հիմարությունը, բարությունը, չարությունը, թեթևամտությունը և այլն։ Բերենք համանիշ դարձվածքների մի քանի շարք հայերենում, ռուսերենում և անգլերենում՝ աչքերը փակել – աչքի որդը / ճիճուն կոտրել – քուն գալ աչքին (քնել), գլուխ թեքել – վիզ ծռել – ոտերն ընկնել – գլուխ խոնարհել (խնդրել, աղաչել, ստորաճալ), սիրտը ալելկոծվել – սիրտը տակն ու վրա լինել – սիրտը վեր ու նիստ անել (հուզվել), ձեռքը փակ – ձեռքը պինդ (ժլատ), *падать / валиться в ногу – пасть к ногам* (խնդրել, աղերսել), *глаз набит – рука набита* (մեկը փորձառու է ինչ – որ բանում), *руки коротки – руки не доходят* (ժամանակ, հնարավորություն չկա ինչ-որ բան անելու), *узы крови – зов крови* (ազգակցական կապ), *prick up one's ears – strain one's ears – cock one's ears* (լսողությունը լարել), *grind one's teeth – grate one's teeth* (ատամները կրճտացնել ցոտից, զայրույթից), *hold one's tongue – keep one's tongue between one's teeth* (լռել, լեզուն ատամների

⁴ Куини А. В. Курс фразеологии современного английского языка, М., 1986, с. 110.

արանքում պահել), **thrust dust into sb's eyes – draw the wool over sb's eyes** (խաբել, աչքերին թոզ փչել):

Բավական մեծ թիվ են կազմում այն հոմանիշ դարձվածքները, որոնք կազմված են միանգամայն տարբեր բաղադրիչներից, ինչպես օրինակ՝ սիրտը փորն ընկնել – թուրք բերանում չորանալ – լեղին ջուր կտրել (սաստիկ վախենալ), գլուխ թեքել – վիզ ծռել (խնդրել, աղերսել, չորանալ), օծի լեզու բանեցնել – բերանից ջալահիր թափել (պերճախոսել), голубая кровь – белая кровь (ազնվականական արյուն), с ног до головы – до мозга костей (ամբողջովին), мозгу не варят – без головы (հիմար), spin sb's head – steal sb's heart (խաբել, մոլորեցնել):

Դիտարկվող լեզուների դարձվածքային հոմանիշներն ուսումնասիրելիս նկատում ենք, որ որոշ հոմանշային շարքեր կարող են ունենալ իրենց համարժեք շարքերը մյուս լեզուներում, ինչպես, օրինակ՝

- արյունը կապույտ - արյունը կարմիր – голубая кровь – белая кровь - good blood – high blood – blue blood

- բերանը փակել – լեզուն իրեն քաշել – закрывать рот – держать язык за зубами – keep one's mouth shut – keep one's tongue behind one's teeth

- գլուխը դղում – գլուխը դատարկ – գլուխը մի կոպեկի խելք չկա – գլուխը մի այր չկա – գլուխը հաստ – еловая голова – мякинная голова – голова садовая – голова дубовая – дурья голова – голова, два уха – a wooden head – a pumpkin head – a mutton head – a thick-headed thing

Բառային համանունության համեմատությամբ դարձվածքային համանունությունը խիստ սահմանափակ է և տարածվում է սահմանափակ թվով դարձվածքների վրա: Համանուն դարձվածքների շարքում խիստ հազվադեպ են այնպիսիք, որ ունեն իրենց համարժեք համանուն դարձվածքները դիտարկվող մյուս լեզուներում, ընդ որում, երբեմն դրանք համարժեք համանուններ կարող են համարվել միայն որոշ իմաստներով՝

- աչքերը փակել (մեռնել) - աչքերը փակել (քնել) - աչքերը փակել (միտումնավոր չտեսնելու տալ) - закрывать глаза (մեռնել) - закрывать глаза (քնել) - закрывать глаза - (միտումնա վոր չտեսնելու տալ) - close one's eyes (քնել) - close one's eyes to sth (միտումնավոր չտեսնելու տալ)

- ոտքի կանգնեցնել (բուժել) – ոտքի կանգնեցնել (դաստիարակել, օգնել տնտեսական վիճակը բարելավելու, գործը կարգի գցել) - ոտքի կանգնեցնել (դրդել ապստամբության) - поставить на ноги (բուժել) - поставить на ноги (դաստիարակել, օգնել տնտեսական վիճակը բարելավելու) - поставить на ноги (ստիպել ակտիվորեն գործել) - поставить на ноги (անհանգստացնել)

- քքի տակ (շատ ցածրաձայն) – քքի տակ (շատ մոտիկ, կողքին)

- под нос (շատ ցածրաձայն) – под нос (շատ մոտիկ, կողքին)

Դիտարկվող լեզուներում հականիշ դարձվածքները լինում են համա-
նման, տարանման և ներհականշային: Դրանք ուսումնասիրելիս նկատում ենք,
որ հականիշ դարձվածքների որոշ զույգեր, օգտագործվում են միայն մեկ
լեզվում. սակայն քիչ չեն նաև այնպիսիք, որ ունեն իրենց համարժեք զույգերը
դիտարկվող մյուս մեկ կամ երկու լեզվում: Համարժեք հականշային զույգերի
առկայությունը տարբեր լեզուներում բացատրվում է այդ լեզուները կրող
ժողովուրդների լեզվամտածողության մեծություններով, իսկ միայն տվյալ
լեզվում գործածվող հականիշ դարձվածքների գոյությունը վկայում է տվյալ
ժողովրդի մտածելակերպի ազգային յուրահատկությունների մասին: Մյուս
կողմից՝ այդ հականիշ զույգերը կարող են պարզապես փոխառված կամ
պատճենված լինել այլ լեզուներից՝

- բարի աչքով նայել – չար աչքով նայել, look with a kind eye – look with an evil
eye

- ականջները սրել - ականջները փակել / խցել, навести уши – закрывать
уши, prick one's ears - turn a deaf ear to sb

- ձեռք մեկնել – մատն իսկ չշարժել, протянуть руку помощи – пальцем не
шевелинуть, give a hand – not to lift a finger (to help)

- գլուխը կախել - գլուխը բարձր բռնել, повесить голову – высоко носить
голову, hang one's head – carry one's head high

- մի ոտն այստեղ, մյուսը՝ այնտեղ - одна нога здесь, другая – там

- մազը երկար, խելքը՝ կարճ - волос длинн, да ум короток - long hair and short
wits

- սև սիրտ, սպիտակ ատամ - a honey tongue, a heart of gall

Դարձվածքների համարժեքության երևույթը սերտորեն առնչվում է
մշակութային խաչասերման երևույթին: Մշակութային խաչասերումը արտա-
հայտվում է դարձվածքների փոխադարձ փոխառմամբ, ինչն էլ իր հերթին
պայմանավորված է տարբեր ժողովուրդների կենսակերպում առկա տարբեր
երևույթների նմանությամբ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ
փոխառվել կամ պատճենվել են մարմնի մասերի անվանումներով այն
դարձվածքները, որոնք ունեն ընկալելի ներքին ձև, և որոնց արտահայտած
իմաստը կապված է տվյալ դարձվածքը կազմող բաղադրիչների իմաստների
հետ՝ բխում է վերջիններից, ասել է թե՛ այն դարձվածքները, որոնք ունեն
պատճառաբանված իմաստ, իսկ այն դարձվածքները, որոնց բաղադրիչների

միջև իմաստային կապը շատ սերտ է և դարձվածքի իմաստը հնարավոր չէ բխեցնել այն կազմող բառերի իմաստներից, ավելի քիչ են փոխառվել:

Դիտարկվող լեզուներում առկա համարժեք դարձվածքների և նույնիսկ համարժեք իմաստային դաշտերի գոյությունը վկայում է այդ լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ընդհանրությունների մասին, ինչն էլ իր հերթին բացահայտում է լեզվամտածողության մեջ եղած մշակութային ընդհանրությունները, մյուս կողմից՝ չնայած ուսումնասիրված դարձվածքների շարքում հանդիպող բազմաթիվ համարժեքների, ուսումնասիրված դարձվածքների ճնշող մեծամասնությունը հատուկ է միայն այս կամ այն լեզվին, մի հանգամանք, որ վկայում է հիշյալ լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ազգային յուրահատկությունների մասին: Այդ տարբերությունները պայմանավորված են մի կողմից՝ մարմնի մասերի անվանումները օգտագործելու տարբեր սովորությամբ, լեզվական միավորների իմաստային ծավալի տարբերություններով, հոմանշային տարբերություններով, մյուս կողմից՝ արտալեզվական գործոններով: Ինչպես նշում է Ս. Գ. Տեր-Մինասովան. «Իրականության միևնույն հատվածը լեզվական տարբեր ձևավորում է ստանում տարբեր լեզուներում, քանի որ իրականության այդ հատվածն անցնում է մարդու գիտակցության միջով և արտացոլման ընթացքում ձեռք է բերում այնպիսի յուրահատուկ գծեր, որոնք հատուկ են տվյալ ազգային գիտակցությանը, որն իր հերթին պայմանավորված է տվյալ ժողովրդի մշակույթով»⁵:

EQUIVALENT PHRASEOLOGICAL UNITS WITH BODY NAMES OF THE ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH LANGUAGES

The equivalent phraseological units with body names of the Armenian, Russian and English languages are considered, as well as their common and differentiating peculiarities are revealed

The semantic characteristics of the investigated phraseological units are conditioned by close interrelation of extralinguistic factors, the linguistic thinking of the people carrying the given language and the semasiological relations between the mentioned languages.

The majority of the phraseological units considered are peculiar to only one language. On the other hand, the existence of equivalent units and even equivalent semantic fields of the mentioned units show the similarities of the linguistic thinking of the peoples speaking the languages studied, what, in its turn, helps reveal the linguistic universals in the sphere of phraseology.

⁵ Тер-Минасова С. Г., Язык и межкультурная коммуникация, М., Слово, 2000, с. 49.